ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Մարտի 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 52 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունվեց, աշխատանքի տեղավորման՝ տասնհինգ, ռմբակոծված տան փոխհատուցման հարցով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսունին տրվել է դրական լուծում, երկու դիմում մերժվել է, չորս դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում: աշխատանքի ընդունվելու մասին դիմած տասնհինգ քաղաքացիները վերցվել են հաշվառման:

Մարզպետի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվում է ռմբակոծված տան փոխհատուցման վերաբերյալ դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ